ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

**«ՀԿ-ԳՀԾՁԲ-23/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտի բացման և գնահատման նիստի**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «24» հունվարի 2023թ. ժամը 10:00-ին:

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝** Վ. Բաբայան /գնահատող/

**Հանձնաժողովի անդամներ՝** Գ. Ղազարյան /գնահատող/, Մ. Սևիլյան /գնահատող/

Ն. Սարգսյան /բացող/, Հ. Մինասյան /բացող/

**Հանձնաժողովի քարտուղար՝** Ա. Մնացականյան /համակարգող/

1. **Տեղեկություններ հայտի բացման մասին**

Ընդունել ի գիտություն, որ հայտը բացվել է www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերը հրապարակելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 10:00-ին, որը համընկել է հայտը ներկայացնելու վերջնաժամկետին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

2. **Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, գտնվելու վայրի հասցեի և էլեկտրոնային հասցեի մասին**

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ աշխատանքային կարիքների համար «ՀԿ-ԳՀԾՁԲ-23/01» ծածկագրով էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը | Կապի միջոցը<br>էլ.փոստ, հեռ.համար |
|---|---|---|---|
| 1. | «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ | ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան պող. 5/1 | էլ.փոստ՝ official@energinst.am<br>Հեռ. (010) 559-659 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0*

3. **Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին**

Մասնակցի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0*

4. **Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մասին**

«ՀԿ-ԳՀԾՁԲ-23/01» ծածկագրով ընթացակարգի մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը՝

**Չափաբաժին 1: «ՀՀ էներգահամակարգի 220կՎ և «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 110կՎ ցանցերում էլեկտրաէներգիայի կորուստների հաշվարկ և վերլուծություն» թեմայով գիտատեխնիկական աշխատանքների իրականացման ծառայությունների մատուցում**

| Մասնակցի զբաղեցրած տեղը | Մասնակցի անվանումը | Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ | Առաջարկված գինը /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| 1 | «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ | 7 000 000 | 8 400 000 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

5. ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

1. «ՀԿ-ԳՀԾՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ին՝ որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող և միակ հայտ ներկայացրած մասնակից:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետ չի կիրառվում:
4. Պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի

ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ ներկայացրած գնային առաջարկի 15 (տասնհինգ) տոկոսի չափով՝ տուժանքի տեսքով, ինչպես նաև ստորագրել և ուղարկել, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

**Հանձնաժողովի նախագահ՝** _____ Վ. Բաբայան

**Անդամներ՝** _____ Գ. Ղազարյան

_____ Մ. Սևիլյան

_____ Ն. Սարգսյան

_____ Հ. Մինասյան

**Քարտուղար՝** _____ Ա. Մնացականյան